



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ԽՈՐՀՈՒՐԴ

#### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

24 դեկտեմբերի 2021 թվականի

թիվ 26

քաղ. Նուր-Սուլթան

**Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության եւ մարման կանոնների մասին համաձայնագրի նախագծի վերաբերյալ**

1. Հավանություն տալ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության եւ մարման կանոնների մասին» համաձայնագրի նախագծին (կցվում է) եւ այն ուղարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ՝ նշված համաձայնագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անցկացնելու նպատակով:

2. Դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ սույն կարգադրության 1-ին կետում նշված համաձայնագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին մինչեւ 2022 թվականի մայիսի 4-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնելու խնդրանքով:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

**Հայաստանի**

**Բելառուսի**

**Ղազախստանի**

**Ղրղզստանի**

**Ռուսաստանի**

**Հանրապետությունից՝ Հանրապետությունից՝ Հանրապետությունից՝ Հանրապետությունից՝ Դաշնությունից՝**

**Մ. Գրիգորյան**

**Ի. Պետրիշենկո**

**Ա. Սմաիլով**

**Ա. Կոժոշեւ**

**Ա. Օվերչուկ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### **Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության եւ մարման կանոնների մասին**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի վրա,

համակարծիք լինելով գյուղատնտեսական արտադրանքի շուկայի գործունեության թափանցիկությունն ապահովելու ձգտման հետ,

ելնելով Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում գյուղատնտեսական արտադրանքի պահեստային վկայագրերի օգտագործման պրակտիկան ընդլայնելու եւ դրանց կայուն շրջանառությունն ապահովելու, ինչպես նաեւ պահեստային վկայագրերի սեփականատերերի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիությունն ապահովելու հարցում անդամ պետությունների շահագրգռվածությունից,

պահպանելով փոխադարձ հարգանքի, հավասարության եւ թափանցիկության սկզբունքները,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

## Հոդված 1

Սույն համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

**պահեստային վկայագրի սեփականատեր**՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն իրավունք ունի պահեստում պահվող գյուղատնտեսական արտադրանքը տնօրինել այն քանակով եւ որակով, որոնք նշված են պահեստային վկայագրում.

**գրավառու**՝ գյուղատնտեսական արտադրանքի գրավով ապահովված պարտավորությունների կատարման պահանջի իրավունք ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

**պահեստային վկայագրերի ռեեստր**՝ անդամ պետության տեղեկատվական ռեսուրս, որը պարունակում է տեղեկություններ թողարկված (տրված) պահեստային վկայագրերի մասին, այդ թվում՝ պահեստային վկայագրերի հետ գործառնությունների մասին (ներառյալ դրանց մարումը), պահեստային վկայագրերի շրջանառության կամ դրանց գծով իրավունքների իրականացման սահմանափակումների (ներառյալ դրանց բնույթը) առկայության մասին, ինչպես նաեւ տեղեկություններ պահեստային վկայագրերի սեփականատերերի եւ գրավառուների մասին.

**պահեստ**՝ անդամ պետության իրավաբանական անձ, որը, որպես ձեռնարկատիրական գործունեություն, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան իրականացնում է ապրանքների պահպանում եւ ծառայությունների մատուցում՝ գյուղատնտեսական արտադրանքի պահպանման մասով.

**պահեստային վկայագիր**՝ ոչ փաստաթղթային ոչ էմիսիոն արժեթուղթ, որը հավաստում է դրա սեփականատիրոջ՝ այդ արժեթղթի թողարկման (տրման) դեպքում սահմանված քանակով եւ որակով պահեստից գյուղատնտեսական

արտադրանքն ստանալու իրավունքը եւ տալիս է գրավով ապահովված պարտավորությունների կատարման պահանջի իրավունք:

Սույն համաձայնագրում օգտագործվող մյուս հասկացությունները պետք է հասկանալ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

## Հոդված 2

1. Սույն համաձայնագիրը կարգավորում է Միության շրջանակներում պահեստային վկայագրերի թողարկման (տրման), շրջանառության եւ մարման հետ կապված իրավահարաբերությունները եւ սահմանում է պահեստային վկայագրերին ներկայացվող պահանջները:

2. Միության շրջանակներում պահեստային վկայագրերի թողարկումը (տրամադրումը), շրջանառությունը եւ մարումն իրականացվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի դրույթները:

3. Պահեստային վկայագրերի շրջանառությունն իրականացվում է բորսայում եւ (կամ) արտաբորսայական շուկայում՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

4. Գյուղատնտեսական արտադրանքի այն տեսակները, որոնց առնչությամբ թողարկվում (տրվում) են պահեստային վկայագրերը, սահմանվում են անդամ պետության օրենսդրությամբ:

5. Անդամ պետություններում թողարկված (տրված), պահեստային վկայագրերի ռեեստրներում ներառված եւ սույն համաձայնագրի պահանջներին համապատասխանող պահեստային վկայագրերը փոխադարձաբար ճանաչվում են անդամ պետությունների կողմից:

### Հոդված 3

1. Որպես պահպանման համար որոշակի քանակի եւ որակի գյուղատնտեսական արտադրանքի ընդունման հաստատում՝ պահեստի կողմից թողարկվում է (տրվում է) պահեստային վկայագիր՝ ձեակերպված ռուերենով եւ անդամ պետության պետական լեզվով (պետական լեզուներով) (անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում):

2. Պահեստային վկայագիրը պարունակում է հետեւյալ պարտադիր տեղեկությունները (վավերապայմանները)՝

ա) պահեստային վկայագրի թողարկման (տրման) ամսաթիվը եւ համարը.

բ) գյուղատնտեսական արտադրանքը պահպանման համար ընդունած պահեստի անվանումը, դրա գտնվելու վայրը եւ այն համարը, որն անձին նույնականացնում է որպես անդամ պետության հարկ վճարող.

գ) գյուղատնտեսական արտադրանքը պահպանման հանձնած պահեստային վկայագրի սեփականատիրոջ անվանումը, նրա գտնվելու վայրը՝ իրավաբանական անձի համար, ազգանունը, անունը հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը՝ ֆիզիկական անձի համար, այն համարը, որն անձին նույնականացնում է որպես անդամ պետության հարկ վճարող (առկայության դեպքում).

դ) պահպանման համար ընդունված գյուղատնտեսական արտադրանքի տեսակը, դրա քանակական եւ որակական բնութագրերը.

ե) այն ժամկետը, որով գյուղատնտեսական արտադրանքն ընդունվել է պահպանման, եթե նման ժամկետ սահմանվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, կամ նշում այն մասին, որ արտադրանքը պահպանման է ընդունվել ցպահանջ.

զ) պահեստային վկայագրերի թողարկմամբ (տրմամբ) գյուղատնտեսական արտադրանքի պահպանման համար ծառայությունների

մատուցման թույլտվության կամ պահեստային վկայագրեր թողարկող (տրամադրող)՝ անդամ պետության պահեստների ռեեստրում (այսուհետ՝ պահեստների ռեեստր) պահեստի մասին տեղեկությունների ներառումը հաստատող փաստաթղթի վավերապայմանները.

է) գյուղատնտեսական արտադրանքի պահպանման դիմաց վարձատրության չափը (սակագները, որոնց հիման վրա այն հաշվարկվում է) եւ այդ արտադրանքի պահպանման համար վճարման կարգը կամ այն ամսաթիվը, մինչեւ որը կատարվել է պահպանման ծառայությունների համար վճարումը.

ը) տեղեկություններ՝ պահեստային վկայագրով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովելու կարգի մասին:

#### Հոդված 4

1. Թողարկված (տրված) պահեստային վկայագրի մասին տեղեկությունները գրանցվում են պահեստային վկայագրերի ռեեստրում:

2. Պահեստային վկայագրի մասով իրավունքների փոխանցման դեպքում պահեստային վկայագրերի ռեեստրում կատարվում է համապատասխան գրառում:

3. Պահեստային վկայագրերի ռեեստրը պարունակում է սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկություններ, ինչպես նաեւ տեղեկություններ՝

ա) գրավառուի անվանման, գտնվելու վայրի, այն համարի մասին, որը նրան նույնականացնում է որպես անդամ պետության հարկ վճարող (գյուղատնտեսական արտադրանքը գրավ դնելու դեպքում).

բ) պահեստային վկայագրի մասով իրավունքների փոխանցման մասին.

գ) պահեստային վկայագրի մարման մասին.

դ) պահեստային վկայագրի մասով իրավունքների սահմանափակման մասին:

4. Պահեստային վկայագրերի ռեեստրի ձեւավորման եւ վարման կարգը սահմանվում է անդամ պետության օրենսդրությամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածի դրույթները:

5. Պահեստային վկայագրերի մասով իրավունքների հաշվառումը կարող է իրականացվել անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող կազմակերպությունների ներգրավմամբ:

## Հոդված 5

1. Պահեստն իր գործունեությունն իրականացնում է անդամ պետության տարածքում եւ պահպանում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված՝ գյուղատնտեսական արտադրանքի պահպանման կանոնները եւ գյուղատնտեսական արտադրանքի քանակական ու որակական հաշվառումը վարելուն ներկայացվող պահանջները:

Պահեստը պահեստային վկայագրերը թողարկում (տալիս) է պահեստային վկայագրերի թողարկմամբ (տրմամբ) գյուղատնտեսական արտադրանքի պահպանման համար ծառայությունների մատուցման թույլտվությունը անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրելու օրվանից կամ պահեստների ռեեստրում դրա մասին տեղեկություններն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներառելու օրվանից:

2. Պահեստների ռեեստրը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) գյուղատնտեսական այն արտադրանքի տեսակի մասին, որի պահպանման համար պահեստը մասնագիտացած է.

բ) պահեստի անվանման, տիպի, տարողության, պահպանման հասանելի ծավալի, գտնվելու վայրի եւ գյուղատնտեսական արտադրանքի պահպանման վայրի մասին.



գ) պահեստների ռեեստրում պահեստի գրանցումը հաստատող փաստաթղթի մասին, որը տրվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

դ) այլ տեղեկություններ՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

## Հոդված 6

1. Պահեստային վկայագրով պահպանման ընդունված գյուղատնտեսական արտադրանքն իր պահպանման ժամկետի ընթացքում կարող է լինել գրավի առարկա, որը ձեւակերպվում է պահեստային վկայագրի մասով իրավունքների սահմանափակման մասին տեղեկությունները պահեստային վկայագրերի ռեեստրում ներառելու միջոցով:

2. Պահեստային վկայագրերի ռեեստրում պարունակվող պահեստային վկայագիրը գրավ դնելու մասին տեղեկությունների առկայության դեպքում պահեստային վկայագրի սեփականատերը պահեստից չի կարող վերցնել գյուղատնտեսական արտադրանքը՝ մինչեւ գրավով ապահովված պարտավորությունների մարումը:

3. Պահեստը գյուղատնտեսական արտադրանքը հանձնում է պահեստային վկայագրի սեփականատիրոջը՝ պահեստային վկայագրերի ռեեստրում դրա մասով իրավունքների իրականացման համար սահմանափակումների մասին տեղեկությունների բացակայության դեպքում:

4. Սույն հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակառակ՝ այն պահեստային վկայագրի սեփականատիրոջը գյուղատնտեսական արտադրանքը հանձնած պահեստը, որի վերաբերյալ պահեստային վկայագրերի ռեեստրում պարունակվում է գրավի մասին գրառում, գրավառուի առջեւ պատասխանատվություն է կրում պահեստային վկայագրի գրավով ապահովված պարտավորությունները մարելու համար:

5. Այն պահեստային վկայագրի սեփականատերը, որը ծանրաբեռնված չէ դրա մասով իրավունքների իրականացման սահմանափակումներով, իրավունք ունի պահանջելու գյուղատնտեսական արտադրանքի մաս-մաս հանձնումը: Ընդ որում՝ սկզբնական պահեստային վկայագրի փոխարեն նրան թողարկվում (տրվում) է նոր պահեստային վկայագիր՝ պահեստում մնացած գյուղատնտեսական արտադրանքի համար:

### Հոդված 7

Պահեստի եւ գյուղատնտեսական արտադրանքի տիրապետողի միջեւ հարաբերությունները ձեւակերպվում են պահպանման հանրային պայմանագիր կնքելու միջոցով: Պահպանման հանրային պայմանագրի տիպային ձեւը սահմանվում է անդամ պետության օրենսդրությամբ՝ հաշվի առնելով դրանում հետեւյալ պարտադիր տեղեկությունների ներառումը՝

պահպանման հանձնվող գյուղատնտեսական արտադրանքի քանակի եւ բնութագրերի, ինչպես նաեւ գյուղատնտեսական արտադրանքի որակական ցուցանիշների մասին, որոնք անհրաժեշտ են դրա պահպանվածությունն ապահովելու համար.

անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետով պահպանման համար ընդունված՝ որակով միատարր գյուղատնտեսական արտադրանքի խմբաքանակի համար պահեստային վկայագիր թողարկելու (տալու), պահեստային վկայագրում նշված քանակով եւ որակով պահպանման համար ընդունված գյուղատնտեսական արտադրանքի պահպանվածությունն ապահովելու, ինչպես նաեւ պահպանման հանրային պայմանագրով իր քաղաքացիաիրավական պատասխանատվությունն ապահովագրելու եւ (կամ) պահեստային վկայագրերով պարտավորությունների կատարման երաշխավորման ֆոնդի (ֆոնդերի) մասնակից դառնալու պահեստի պարտավորությունների մասին:

## Հոդված 8

Անդամ պետությունն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցական ցանցում հետեյալի տեղադրումը՝

ինտերնետ ռեսուրս, որն անդամ պետության պահեստային վկայագրերի ռեսուսրից տեղեկությունների հասանելիության միասնական կետ է տրամադրում.

այն կազմակերպությունների մասին տեղեկությունները, որոնք իրականացնում են գյուղատնտեսական արտադրանքի անվտանգության եւ որակի փորձաքննություն (անվանումը, գտնվելու վայրը, ինչպես նաեւ անձին որպես անդամ պետության հարկ վճարող նույնականացնող համարը).

օրենսդրական եւ այլ նորմատիվային իրավական ակտեր, որոնք կարգավորում են անդամ պետությունում պահեստային վկայագրերի շրջանառությունը, պահեստային վկայագրերի ռեսուսրի ձեւավորման ու վարման կարգը, ինչպես նաեւ այդպիսի ակտերի նախագծեր.

պահեստային վկայագրերի մասով պարտավորությունների կատարումը ապահովելու կարգի ու պայմանների վերաբերյալ տեղեկատվություն.

պահեստի եւ գյուղատնտեսական արտադրանքի տիրապետողի միջեւ պահպանման հանրային պայմանագրի տիպային ձեւ.

պահեստների ցանկ, որոնց պահեստային վկայագրերի թողարկմամբ (տրմամբ) գյուղատնտեսական արտադրանքի պահպանման համար ծառայությունների մատուցման թույլտվություններ են տրվել, կամ որոնք ներառվել են պահեստների ռեսուսրում:

## Հոդված 9

1. Պահեստների կողմից պահեստային վկայագրերի մասով պարտավորությունների կատարման ապահովումն իրականացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան եւ նախատեսում է կազմակերպահրավական միջոցառումների համալիր, որոնք ուղղված են պահեստների կողմից թողարկված (տրված) պահեստային վկայագրերի մասով պարտավորությունները՝ դրանց կողմից չկատարվելուց պահեստային վկայագրերի սեփականատերերի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությանը, այդ թվում՝ անդամ պետություններում պահեստային վկայագրերի մասով պարտավորությունների կատարման երաշխավորման ֆոնդի (ֆոնդերի) ձեւավորման կամ պահեստային վկայագրերի սեփականատերերի առջեւ պահեստների քաղաքացիահրավական պատասխանատվության ապահովագրման միջոցով:

2. Անդամ պետություններում ստեղծվող՝ պահեստային վկայագրերի մասով պարտավորությունների կատարումն ապահովող համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից՝ անդամ պետությունների առաջարկությունների հիման վրա:

3. Անդամ պետությունը, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, իր տարածքում ապահովում է հսկողություն՝ պահեստների կողմից պահեստային վկայագրերի թողարկման (տրման) եւ մարման կանոնները, գյուղատնտեսական արտադրանքի պահպանման կանոնները, անվտանգության պահանջները եւ գյուղատնտեսական արտադրանքի քանակական ու որակական հաշվառումը վարելու պահանջները պահպանելու նկատմամբ:

4. Անդամ պետությունն ապահովում է այն գյուղատնտեսական արտադրանքի որակի փորձաքննության անցկացումը, որի համար անդամ պետության տարածքում թողարկվում (տրվում) են պահեստային վկայագրերը:

## Հոդված 10

Սույն համաձայնագրի մասով վերապահումներ չեն թույլատրվում:

## Հոդված 11

Սույն համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթներին համապատասխան:

## Հոդված 12

Սույն համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ Միության իրավունքի մաս է կազմում:

## Հոդված 13

Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով եւ սույն համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:

## Հոդված 14

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, բայց 2026 թվականի հունիսի 1-ից ոչ շուտ:

Կատարված է \_\_\_\_\_ քաղաքում, \_\_\_\_\_ թվականի \_\_\_\_\_ « \_»-ին,  
մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովում, որը, որպես սույն համաձայնագրի ավանդապահ,  
յուրաքանչյուր անդամ պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

<b>Հայաստանի</b>	<b>Բելառուսի</b>	<b>Ղազախստանի</b>	<b>Ղրղզստանի</b>	<b>Ռուսաստանի</b>
<b>Հանրապետության</b>	<b>Հանրապետության</b>	<b>Հանրապետության</b>	<b>Հանրապետության</b>	<b>Դաշնության</b>
<b>կողմից՝</b>	<b>կողմից՝</b>	<b>կողմից՝</b>	<b>կողմից՝</b>	<b>կողմից՝</b>